

«Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/3

3 փետրվարի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Սահականույշ Սահակյանի 12.01.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը թյուրիմացաբար սխալ տպված ՀԴՄ կտրոնում արտացոլված գումարը շրջանառության մեջ չներառելու վերաբերյալ:

Ա/Ձ Սահականույշ Սահակյանի գանգատում բերված փաստարկները.

Սահականույշ Սահակյանը հայտնում է, որ 25.07.2014 թ-ին սխալմամբ տպել է 12.002.700 դրամի հսկիչ-դրամարկղային կտրոն: Դեպքը տեղի է ունեցել հետևյալ կերպ:

Հաճախորդը վերցրել 1200 դրամ արժողությամբ ապրանք և մոտեցել է հսկիչ-դրամարկղային մեքենային՝ վճարում կատարելու նպատակով: Սահականույշ Սահակյանի կողմից ՀԴՄ է մուտքագրվել 1200 դրամ: Սակայն հաճախորդը մտափոխվել է և այդ ապրանքը հետ է դրել: Այնուհետև վերցնելով 2700 դրամ արժողությամբ մեկ այլ ապրանք հաճախորդը մոտեցել է հսկիչ-դրամարկղային մեքենային: Սահականույշ Սահակյանը ուշադրություն չդարձնելով, որ ՀԴՄ-ում արդեն իսկ մուտքագրված է 1200 դրամ գումար, մուտքագրել նաև 2700 դրամը: Արդյունքում ՀԴՄ է մուտքագրվել 12.002.700 դրամ և նույն գումարի չափով էլ տպվել է հսկիչ-դրամարկղային կտրոն:

Սահականույշ Սահակյանը չիմացության հետևանքով սխալ տպված կտրոնը չեղյալ համարելու վերաբերյալ համապատասխան տեղեկանքը տարածքային հարկային տեսչություն է ներկայացրել սահմանված ժամկետից ուշ: Բացի այդ, նշված տեղեկանքը ուշ ներկայացնելուն նպաստել է նաև նրա հիվանդ լինելը:

Նաիրիի ՏՀՏ-ում Սահականույշ Սահակյանին հայտնել են, որ իր կողմից խախտվել է տեղեկանքը ներկայացվելու «Վ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325 որոշմամբ սահմանված ժամկետը: Արդյունքում պարզվել է, որ այդ սխալի պատճառով տվյալ եռամսյակի համար գոյացել է մոտ 420.000 դրամի շրջանառության հարկ, որն անհնարին է վճարել:

Ըստ գանգատի, շրջանառության հարկի հաշվարկը ուշ ներկայացնելու համար տնտեսվարող սուբյեկտը ենթարկվում է վարչական տույժի, որից հետո հաշվարկն ընդունվում է: Արդյոք այս դեպքում նույնպես հնարավոր չէ կիրառել վարչական տույժ, որից հետո ընդունել տվյալ սխալ տպված կտրոնը չեղյալ համարելու մասին տեղեկանքը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով ֆինանսական ծայրահեղ ծանր վիճակը Ա/Ձ Սահականույշ Սահակյանը խնդրում է չեղյալ համարել վերը նշված հսկիչ-դրամարկղային կտրոնը:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Սահականույշ Սահակյանը 21.10.2014 թ-ին Նաիրիի ՏՀՏ է ներկայացրել դիմում, որի համաձայն 25.07.2014 թ-ին իր խանութում

կատարված վաճառքի դիմաց ՀԴՄ կտրոն տրամադրելիս սխալմամբ 1200 դրամի փոխարեն տպել է 12.002.700 դրամի կտրոն:

Համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 1325 որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի է) ենթակետի, կազմակերպությունները յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ, յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք, համաձայն թիվ 9 ձևի: Տվյալ դեպքում Ա/Ձ Սահականույշ Սահակյանը չի մացության պատճառով նշված տեղեկանքը սահմանված ժամկետում չի ներկայացրել:

Նշվեց նաև, որ Նաիրիի ՏՀՏ ընթացիկ հսկողության բաժնի կողմից Ա/Ձ Սահականույշ Սահակյանի 21.10.2014 թ-ին դիմումի հետ կապված վերջինիս մոտ (ք.Եղվարդ, Չարենցի 180/1 հասցեում գտնվող խանութում) կատարվել է այցելություն, որի վերաբերյալ 27.10.2014 թ-ին կազմվել է զեկուցագիր:

Զեկուցագրում մասնավորապես նշվել է, որ խանութում հիմնականում վաճառվում են հիմնականում չինական արտադրության հագուստ և պլաստմասե կենցաղային իրեր: Հագուստի գները կազմել են 200 դրամից մինչև 18500 դրամ, իսկ պլաստմասե կենցաղային իրերինը՝ 350 դրամից մինչև 5000 դրամ: Այցելության օրվա դրությամբ խանութում առկա ապրանքային մնացորդը գնահատվել է մոտ 5-6 մլն դրամ:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ վերը նշված 12.002.700 դրամի ՀԴՄ կտրոնը Ա/Ձ Սահականույշ Սահակյանի կողմից տպվել է թյուրիմացաբար՝ մեխանիկական սխալի արդյունքում: Նման պարագայում, երբ, ըստ էության, գործ ունենք մեխանիկական սխալի հետ, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կատարված այցելությամբ հաստատվել է, որ տվյալ տնտեսվարող սուբյեկտի մոտ գործնականում բացառվում է նման գումարի ապրանքների վաճառքը, 12.002.700 դրամի հասույթի գումարը ՀԴՄ մուտքագրելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ դրանից բխող պարտավորությունների հաշվարկման և առաջադրման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Սահականույշ Սահակյանի 12.01.2015 թ-ի գրությամբ բերված գանգառը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Սահականույշ Սահակյանի 12.01.2015 թ-ի գրությամբ բերված գանգառը՝ թյուրիմացաբար սխալ տպված ՀԴՄ կտրոնում արտացոլված գումարը շրջանառության մեջ չ'ներառելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝

